Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
նոյեմբերի 30-ի N 2100 - Ն որոշման

«Հավելված N 19
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 5-ի N 665-Ն որոշման

ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ՝ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ (ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ), ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՏԵՍԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԳՈՐԾ (ՓԱՍՏԱԹՂԹԵՐ) ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն հավելվածով սահմանվում են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) փախստականի կարգավիճակ ունեցող անձին կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու, կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգի առանձնահատկությունները (այսուհետ՝ կարգ):

2. Փախստականի կարգավիճակ ունեցող անձը կենսաթոշակ նշանակելու համար դիմում է, նրան կենսաթոշակ նշանակվում (վերահաշվարկվում), կենսաթոշակի տեսակը փոխվում, կենսաթոշակը վճարվում, կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ բացառությամբ, երբ նա հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ ժամանակավոր պաշտպանության տակ վերցված՝ փախստական ճանաչված անձ (այսուհետ՝ ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստական):

3. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականը նույնականացվում է Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի տվյալներով:

4. Սույն կարգով սահմանված ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականներին կենսաթոշակները նշանակում ու վճարումն ապահովում, կենսաթոշակի գործերը (փաստաթղթերը) հաշվառում և վարում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն), Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ՝ համապատասխան մարմին)՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումների միջոցով:

5. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականը, ում կենսաթոշակի էլեկտրոնային գործն առկա է Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակային բազայում (անկախ կենսաթոշակ ստանալու իրավունքը Լեռնային Ղարաբաղում դադարեցված լինելու հանգամանքից), կենսաթոշակ նշանակելու համար դիմումը ներկայացնում է ծառայության կենսաթոշակ նշանակող ցանկացած ստորաբաժանում, իսկ զինվորական կենսաթոշակների դեպքում՝ նաև համապատասխան մարմնի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Դիմումին կից ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթը և ըստ անհրաժեշտության՝ այլ փաստաթղթեր, եթե Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակային բազա ներառված՝ անձի կենսաթոշակի էլեկտրոնային գործում առկա տեղեկատվությունը կամ փաստաթղթերի լուսապատճենները բավարար չեն կենսաթոշակ նշանակելու համար:

6. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականը, ում էլեկտրոնային գործն առկա է Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակային բազայում (անկախ կենսաթոշակ ստանալու իրավունքը Լեռնային Ղարաբաղում դադարեցված լինելու հանգամանքից), կենսաթոշակ նշանակելու համար դիմումը մինչև 2024 թվականի հունիսի 1-ը կարող է ներկայացնել նաև առցանց եղանակով՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման N 1 հավելվածի 44.1-ին, 44.2-րդ և 44.4-րդ կետերով սահմանված կարգով:

7. Համապատասխան ծրագրային գործիքակազմի միջոցով ծրագրային միջավայրում մուտքագրված տվյալներն ինքնաշխատ եղանակով համադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1849-Ն որոշմամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի տվյալներում առկա տեղեկատվության հետ:

8. Առցանց ներկայացված տվյալների հիման վրա դիմում չի ձևավորվում, եթե ծրագրային միջավայրում մուտքագրված և Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի տվյալներում առկա են անհամապատասխանություններ (սխալներ), և դրա մասին առցանց (անմիջապես) ծանուցվում է դիմողին:

9. Առցանց ներկայացված դիմումի հիման վրա ծրագրային միջավայրում մուտքագրվում են հետևյալ տվյալները՝

1) ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

2) անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը.

3) կենսաթոշակն ստանալու եղանակը, կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու դեպքում՝ նաև բանկի անվանումը, որտեղից կենսաթոշակառուն ցանկանում է ստանալ կենսաթոշակը, իսկ կենսաթոշակը կանխիկ եղանակով ստանալու համար դիմելու դեպքում՝ նաև կազմակերպության անվանումը.

4) հետադարձ կապի բջջային հեռախոսահամարը:

10. Առցանց դիմումի հիման վրա կենսաթոշակ չի նշանակվում, եթե՝

1) անձը ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստական չէ.

2) ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում.

3) Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակային բազայի տվյալներում առկա չէ անձի կենսաթոշակի էլեկտրոնային գործը.

4) Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակային բազայի տվյալներով՝ առցանց դիմելու օրվա դրությամբ Լեռնային Ղարաբաղում կենսաթոշակի վճարումը դադարեցված է:

11. Առցանց դիմումի հիման վրա կենսաթոշակ նշանակելու (չնշանակելու), իսկ կենսաթոշակ չնշանակելու դեպքում՝ նաև հիմքերի մասին հաղորդագրություն է ուղարկվում ծրագրային միջավայրում մուտքագրված էլեկտրոնային փոստի հասցեին:

12. Սույն կարգի 5-րդ կետի համաձայն՝ մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը կամ սույն կարգի 6-րդ կետի համաձայն՝ մինչև 2024 թվականի հունիսի 1-ը ներկայացված դիմումի հիման վրա կենսաթոշակ նշանակելիս՝

1) Լեռնային Ղարաբաղում նշանակված աշխատանքային և զինվորական կենսաթոշակների իրավունքը չի վերանայվում՝ բացառությամբ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերի, երբ նշանակվում է տարիքային աշխատանքային կենսաթոշակ.

2) Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակային բազա ներառված կենսաթոշակի գործում առկա՝ հաշվարկված ստաժը, այդ թվում՝ արտոնյալ հաշվարկով, պահպանվում է նույնությամբ.

3) կենսաթոշակի չափը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով:

13. Սույն կարգի 12-րդ կետի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը Լեռնային Ղարաբաղում դադարեցվել է կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու կամ անձին սխալմամբ (օրենքի խախտմամբ) կենսաթոշակ նշանակված լինելու հիմքերից մեկով:

14. Սույն կարգի 5-րդ կետի կամ սույն կարգի 6-րդ կետի համաձայն՝ մինչև 2024 թվականի հունիսի 1-ը ներկայացված դիմումի հիման վրա կենսաթոշակը նշանակելիս օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով սահմանված

ժամկետները հաշվարկվում են 2023 թվականի դեկտեմբերի 11-ից: Այս դեպքում կենսաթոշակը չի կարող նշանակվել 2023 թվականի հոկտեմբերի 1-ից շուտ:

15. 2024 թվականի հունիսի 1-ին և դրանից հետո սույն կարգի 5-րդ կետով սահմանված կարգով ներկայացված դիմումի հիման վրա կենսաթոշակը նշանակվում է օրենքի 34-րդ հոդվածով սահմանված ժամկետներում:

16. Սույն կարգի 5-րդ կետով սահմանված կարգով 2028 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ներկայացված դիմումի հիման վրա կենսաթոշակ նշանակվում է օրենքով սահմանված կարգով:

17. Եթե ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականը կենսաթոշակի իրավունքը ձեռք է բերել (այդ թվում՝ կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացել է) 2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում, ապա նրան կենսաթոշակ նշանակվում է օրենքով սահմանված ժամկետներում: Այս դեպքում կենսաթոշակը նշանակելիս օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով սահմանված ժամկետները հաշվարկվում են 2023 թվականի դեկտեմբերի 11-ից: Ընդ որում, կենսաթոշակը նշանակվում է կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից, բայց 2023 թվականի հոկտեմբերի 1-ից ոչ շուտ:

18. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականին հաշմանդամության կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի տված տեղեկանքում կամ անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմնի տված՝ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու մասին որոշման (վարչական ակտի) հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման N 1 հավելվածի 11-րդ կետով սահմանված կարգով: Այս դեպքում, եթե հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու մասին որոշման (վարչական ակտի) «Գնահատման ամսաթիվը» մասի «սկիզբ» տողում նշված ամսաթիվը 2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի

11-ն ընկած ժամանակահատվածում է, և դիմումը ներկայացվել է մինչև 2024 թվականի հունիսի 1-ը, ապա հաշմանդամություն սահմանելու օրը համարվում է «սկիզբ» տողում նշված ամսաթիվը, բայց ոչ շուտ, քան 2023 թվականի հոկտեմբերի 1-ը, իսկ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված եռամսյա ժամկետը հաշվարկվում է «Գնահատման ամսաթիվը» մասի «ավարտ» տողում նշված ամսաթվից, բայց ոչ շուտ, քան 2023 թվականի դեկտեմբերի 11-ից: 2024 թվականի հունիսի 1-ից հետո դիմելու դեպքում հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման N 1 հավելվածի 11-րդ կետով սահմանված ժամկետների հաշվառմամբ:

19. Լեռնային Ղարաբաղի բժշկասոցիալական փորձաքննություն իրականացրած իրավասու պետական մարմնի՝ 2023 թվականի սեպտեմբերի 1-ից հետո տված տեղեկանքը հիմք է ընդունվում ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականին հաշմանդամության կենսաթոշակ նշանակելու համար՝ սույն կարգի 18-րդ կետով սահմանված ժամկետների հաշվառմամբ:

20. Եթե ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականը Լեռնային Ղարաբաղում կենսաթոշակ է ստացել պետական պաշտոններ զբաղեցնելու հիմքով, ապա սույն կարգի 5-րդ կետով սահմանված կարգով ներկայացված դիմումի հիման նրան նշանակվում է աշխատանքային կենսաթոշակ կամ զինվորական կենսաթոշակ, եթե բավարարում է օրենքով սահմանված պայմաններին:

21. Սույն կարգի 5-րդ կամ 6-րդ կետերով սահմանված կարգով դիմած՝ ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականին ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակի փոխարեն «Պետական նպաստների մասին» օրենքով նշանակվում է համապատասխանաբար, ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ, եթե նա օրենքով չունի կենսաթոշակի իրավունք:

22. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող (շահառու հանդիսացող)՝ Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակառուին կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվում օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 22-րդ հոդվածի 4-րդ մասերի, իսկ հաշմանդամության կենսաթոշակի դեպքում՝ օրենքի 12-րդ և 20-րդ հոդվածների 4-րդ մասերի պահանջների հաշվառմամբ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ